ԵՐԵՎԱՆԻ Յ. ԼԵՓՍԻՍՈՒՍԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 88 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝ Զ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2022թ.

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Բարձրացնել 2022-2023 ուս. տարվա ընթացքում հասարակագիտական մեթոդմիավորման մեջ ընդգրկված առարկաների դասավանդման արդյունավետությունն ու որակը:
- Յուրաքանչյուր դասի ընթացքում ձևավորել կարողություններ և հմտություններ:
- Յուրաքանչյուր աշակերտի մեջ ձևավորել գրագետ խոսք կառուցելու, խոսքը վերահսկելու, պատմական մտածողություն ձևավորելու, բարբառային, ժարգոնային արտահայտություններից մաքրելու, ինքնուրույն հասկանալու կարողություններ:
- Դասապրոցեսում գրական/հերոսական կերպարների ուսումնասիրման շրջանակներում ձևավորել անձի բարոյահոգեբանական աշխարհայացքը:
- Աշակերտներին դաստիարակել բարոյական բարձր հատկություններով՝ բարություն, ընկերասիրություն, ազնվություն, պատասխանատվություն, պատվախնդրություն, բարեխղճություն, հաստատակամություն և այլ արժեքներ:
- Դասավանդման ընթացքում կարևորել ուսուցման բովանդակության գործնական կիրառական ուղղվածությունը:
- Ուսումնադաստիարակչական աշխատանքները նպատակաուղղել դաստիարակելու ազգային և համամարդկային արժեքներ կրող ակտիվ անձ և քաղաքացի:
- Ամրապնդել հարգանք և հպարտություն հայրենիքի, բնության հանդեպ, ճանաչել ինչպես հայրենիքի, այնպես էլ մյուս ժողովուրդների պատմությունը, իրազեկ լինել քաղքական և պատմական իրադարձություններին:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԻ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՂՅՈՒՍԱԿ

№	Անուն, ազգանուն	Ծննդյան տ/թիվ	Կրթություն	Աշխ. ստաժ	Դասավանդվող առարակներ	Դասարաններ	Դ\ժամ
1.	2	3	4	5	6	7	8
1.	Զվարթ Թադևոսյան	1954թ.	բարձրագույն	41	Հայոց պատմություն Համաշխարհային պատմ. Հասարակագիտություն	6,7,8,9	26
2.	Թամարա Մարտիրոսյան	1957թ.	բարձրագույն	35	ՀԵՊ	5,6,7,8,9	17
3.	Արմեն Վարդանյան	1986թ.	բարձրագույն	3	Հայոց պատմություն Համաշխարհային պատմ.	6,7,8,9	20

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ՊԼԱՆ-ԾՐԱԳԻՐՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

№	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԿԱՄ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
1	2	3
1.	ՕԳՈՍՏՈՍ	**Մ/Մ նիստի գումարում, կազմի հաստատում** ● Նախորդ ուսումնական տարվա աշխատանքների արդյունքների ամփոփում, նոր ուսումնական տարվա աշխատանքային գործունեության քննարկում, ծանոթացում ● Մ/Մ տարեկան աշխատանքային պլանի նախագծի քննարկում ● Ուս.պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման առաջարկություն, ● Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցման պլանների մշակում ● Նոր ուսումնական տարվա դասաբաշխման քննարկում ● Էլեկտրոնային մատյանները վարելու կարգի ներկայացնում:
2.	ՍԵՊՏԵՄԲԵՐ	● Նախորդ ամսվա աշխատանքային գործունեության ամփոփում ● Առարկայական թեմատիկ պլանավորումների քննարկում և հաստատում ● Թեմատիկ պլանների հանձնում ● Ծանոթություն հանրակրթության առարկայական պետական չափորոշիչներին ● Աշակերտների գիտելիքների, դասավանդման որակի բարձրացմանն ուղղված նոր տեխնոլոգիաների, մեթոդների քննարկում և կիրառում ուսումնական գործընթացում ● Մ/մ անդամների հետ գործնական գրավորների համատեղ աշխատանքների քննարկում, կազմակերպում:
3.	ՀՈԿՏԵՄԲԵՐ	●Նախորդ ամսվա աշխատանքային գործունեության ամփոփում ● Դասավանդման առկա խնդիրների վերաբերյալ քննարկում

		● Փոխադարձ դասալսումների կազմակերպում ● Մ/մ անդամների հետ թեմատիկ գրավորների համատեղ աշխատանքների քննարկում, կազմակերպում ● Սովորողների գիտելիքների, դասավանդման որակի բարձրացմանն ուղղված նոր տեխնոլոգիաների , մեթոդների քննարկում և կիրառում ուսումնական գործընթացում ●Մեթոդական զեկուցման ընթերցում ●Թեմա՝ «Ուսումնաճանաչողական էքսկուրսիաների կազմակերպման արդյունավետությունը ուսումնական գործընթացում»:
4.	ՆՈՅԵՄԲԵՐ	● Նախորդ ամսվա աշխատանքային գործունեության ամփոփում, ● Փոխադարձ դասալսումների կազմակերպում ● Ուսուցիչների համար մասնագիտական և մանկավարժական մեթոդական խորհրդատվությունների կազմակերպում ● Ներդպրոցական օլիմպիադայի մասնակից աշակերտների հետ աշխատանքի պլանավորում (ժամանակացույցի կազմում), անցկացում:
5.	ԴԵԿՏԵՄԲԵՐ	●Նախորդ ամսվա աշխատանքային գործունեության ամփոփում ● Փոխադարձ դասալսումների արդյունքների վերլուծություն ● Կիսամյակային գրավոր աշխատանքների անցկացում, արդյունքների քննարկում ● Թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքների կատարողականի ստուգում ● Մ/մ անդամների կիսամյակային հաշվետվությունների անցկացում ● Առարկայական օլիպիադաների արդյունքների վերլուծություն ● 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի համար նախատեսված աշխատանքների քննարկում, կազմակերպում:
6.	ՀՈՒՆՎԱՐ	● Նախորդ ամսվա աշխատանքային գործունեության ամփոփում ● II-րդ կիսամյակում նախատեսված աշխատանքների քննարկում՝ ● Բաց դասերի անցկացման քննարկում, ● Մասնագիտական և մանկավարժական մեթոդական խորհրդատվությունների կազմակերպում ● Տոներին և տարելիցներին նվիրված դաս-միջոցառումների/քննարկումների իրականացում:
7.	ՓԵՏՐՎԱՐ	●Նախորդ ամսվա աշխատանքային գործունեության ամփոփում ● Պլանավորված աշխատանքների արդյունքների քննարկում ● Ուսուցիչների համար մասնագիտական և մանկավարժական մեթոդական խորհրդատվությունների կազմակերպում ● Ուսուցիչների դասավանդման հմտությունների բարձրացմանն ուղղված աշխատանքների կազմակերպում և իրականացում ●Մանկավարժական զեկուցում՝ օգտվելով գիտամեթոդական ամսագիր-ձեռնարկից:
8.	ՄԱՐՏ	●Նախորդ ամսվա աշխատանքային գործունեության ամփոփում ● Առարկայական շաբաթի կազմակերպում և իրականացում ● Գործնական գրավոր աշխատանքների կազմակերպում, իրականացում ● Ինտերակտիվ դաս-վիկտորինաների անցկացում ● Գիտաճանաչողական այցերի, էքսկուրսիաների կազմակերպում :
9.	ԱՊՐԻԼ	●Նախորդ ամսվա աշխատանքային գործունեության ամփոփում ● Աշակերտների գիտելիքների, հմտությունների, դիրքորոշմանը և արժեքային մոտեցումների ձեւավորման համար համապատասխան ուսումնանյութական միջավայրի ապահովում

		● Դասալսումների իրականացում և քննարկում ● Մեթոդական զեկուցման ընթերցում: Թեմա՝ «Հայոց ցեղասպանությունը և դրա դասավանդման առանձնահատկությունները»:
10.	ՄԱՅԻՍ	●Նախորդ ամսվա աշխատանքային գործունեության ամփոփում ● Թեմատիկ/կիսամյակային գրավոր աշխատանքների անցկացում, քննարկում և վերլուծություն ● Կատարողականի ստուգում ● 120-ից 200 և ավելի ժամ բացակայություն ունեցող սովորողների համար քննությունների նախապատրաստական աշխատանքների կազմակերպում ● Քննական հարցատոմսերի կազմում և հաստատում:
11.	ՀՈՒՆԻՍ	●Նախորդ ամսվա աշխատանքային գործունեության ամփոփում ●Նախաքննական խորհրդատվությունների (կոնսուլտացիաների) անցկացում ավարտական քննությունների արդյունքների վերլուծություն և ամփոփում ●Ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքների վերլուծություն և ամփոփում ● Ողջ ուսումնական տարվա ընթացքում ձեռքբերումների և թերացումների քննարկում ● Տարեվերջյան հաշվետվությունների կազմում ● Նախնական դասաբաշխում: